

5076

Чиричбич

18865

Чиро

891.99

4h - 28

1919

16070

Թիւ 21,- Ս. Դ. ՀԵԶ. ԿԱԽԱ. ԱՄԵՐ. ԾՐՁ. ԿԵԴՐ. Վ. ՄԱՐՄԻՆ

891.99

47-28

Պ Ա Փ Օ

ԳՐԵՑ

ՓԱՐԱՄԱԶ



ՏՊԱՐԱՆ

«ԵՐԻՏԱՍԱՍՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի

ՇԻՖԱԿՈ

1919

483

991.99

Կ-28

Թիւ 21.- Ա. Դ. ՀԵԶ. ԿՈՒՍ. ԱՄԵՐ. ՇԻԶ. ԿԵԴՐ. Վ. ՄԱՐՄԱՐ

Պ Ա Ք Օ

Ց Բ Գ

ՓԱՐԱՄԱԶ




12003

ՏՊԱՐԱՆ


«ԵՐԻՑԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի

6070

1919



78726-ՆԵՐ  
1941-87



1.- ՓԱՐԱՄԱԶ ՓԱՐԱՄԱԶԵԱՆ  
3.- ԳԵՂՐԻ ՄԵԼԻՔ ՑԱԿՈԲԵԱՆ

2.- ՍԱՐԿԱՆՅԱ-ՑՈԼԱԿ  
4.- ՖԵԼԵԿԵԱՆ

## ՅԱՌԱԶԱԲԱՆ

Այս խմբանկարի յետեւը՝ Փարամազի իր ձևովը գրուած է Հետեւալը.

«Աղջիկս, Խալունի՛ չան ա՛ն այս պատկերը. յիշի՛ք հօրդ եւ գնա՛ նրա նամապարհովը, որը թէեւ փռու, բայց դէպի երշանկութեան ասպարեզն է տանում:

Հայոց՝ ՓԱՐԱՄԱԶԻ

1896. Նոյ. 18. ՄԱԼՄԱՍ (Դիլման)».

Փարամազի այս փոքրիկ թառերախաղը մի կատարեալ գլուխ գործոց է՝ իր մէջ բռվանդակուած մաթերի եւ իրական կեանիցից վերցուած պատկերի համար:

Ո՞վ եւ ի՞նչ է Սկիլիմը:

Դա մի արեւելեան բռնաւոր է, մի թագակիր, որ ամբողջ պետութիւնը, իր հողային տարածութեամբ եւ մարդարեակչութեամբ՝ իր անձեռնմխելի ՍԵՊՆԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ է համարում՝ Աստուածային իրաւունքի հիմունիքով:

Նա մի բռնապետ է, որին պետք է միայն հնագանդել. նրա հրամանները սուրբ են, նուիրական անընդդիմադրելի:

Նա ոչ ո՞յի, ո՞չ մի հաստատութեան դեմ  
պարտականութիւն ունի կատարելիք. — ո՞չ,  
նա միայն ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐ ունի. որոնք հրա-  
մայական սրբութիւններ են իր բոլոր ՀՊԱ-  
ՏԱԿՆԵՐԻ համար:

Բոնապետը միայն մի իդեալ ունի՝ ծծել  
կեանիք, հաճոյիք, վայելել աշխարհի զուար-  
ձութիւնները, որքան որ կարող է: Պետու-  
թեան մեջ գտնուող ամեն մարդ, ամեն ինչ  
իր համար են. ինքն է ամեն բանի կեդրոնիք,  
իրենից դուրս՝ ոչ ունիթիւն:

Պաշտօնեանները, մեծ թէ փոքր, բոլորն  
էլ իր կամակատար ստրուկներն են. նրանի  
միշտ էլ մեջ պիսի ծուեն և գտնեն, տրամա-  
դբրելի անեն այն ամեն միցոցները, որոնք  
կարող են բաւականութիւն տալ բոնապետի  
կրթերին, նրա ֆմահաճոյիքի խաղերին:

Կարձ՝ Սելիմը արեւելեան մի բոնապետ  
է. պիտական, ընկերային, տնտեսական բո-  
լոր հիմնարկութիւններն էլ նրան գոհացում  
տալու միցոցներ են:

Բոնապետների այդ տիպը մեզ անծանօթ  
չէ. մեր կեանիքը այդ շրջանակի մեջ դրուած  
է եղել եւ մենի նրա հետեւանինները կրել ենի  
մեր կաշիի վրայ:

Երկրորդ տիպը դա ՊԱ.ՔՕ-ն է. հարա-  
զատ եւրկայացուցիչ իր միջավայրի. նա  
խորթ չէ. նա բնական մի պատկեր է իր հո-  
գու բոլոր խաղացքով:

Պախօն գտնուում է տնտեսական ամենա-  
ծանր ճգնաժամի մեջ. կեանիքը իսկապէս ԱՆ-  
ՏԱՆԵԼԻ է դարձել նրա համար. վիրաւոր-  
ուած են իր բոլոր զգացումները. նրա ա-  
մուսիսական, հայրական արժանապատու-  
թիւնը ո՞չ միայն ասատիկ հարուածների է  
ենթարկուել, այլ պարզապէս տեսնում է, որ  
սուեղծուած, գոյութիւն ունեցող պայմաննե-  
րը իր եւ իր զաւակների կեանիքի թելլը կտրե-  
րու վրայ են:

Եւ Պախօն, փոխանակ ըմբռատանալու,  
փոխանակ իր թշուառութեան պատճառը եւ  
պատախանառուները փնտելու՝ նրանց

գեմ ցցուելու, նրանց պատմելու միտումով՝  
ևս միայն ՀՊԱՏԱԿՈՒՄ է, տանում և իրերի  
այն դրութիւնը, որ իրեն ՄԱՀ է սպառնում:

Ըմբոստութեան, ապստամբութեան ի-  
րաւունիք, մարդկային իրաւունիքների բարձր  
հասկացութիւն. — սրանիք գոյութիւն չու-  
նեն Պատօի համար. ևս ծնած է ՍՏՐՈՒԿ մի-  
ջավացրից, ՍՏՐՈՒԿ մեծացած, ՍՏՐՈՒԿ էլ  
հոգի ունի:

Դա ՌԱՅԵԱՆ է, անմոռունչ, անխօս ռայ-  
եան, որ բողոքի, ըմբոստացման մասին ա-  
մենաթոյլ գաղափար անգամ չունի:

Եւ ահա թէ ինչո՞ւ Սէլիմները ապրում են,  
իսկ Պատօները ՈՐԴԻ կեանիք ժաշկրտում:

Եզրակացութիւն. — կեանիքը կոյիւ է.  
ապրելու համար պետք է կռուել, պետք է մա-  
հանալ:



Փարամազի գաղափարանութիւնը ա-  
մենալաւ կերպով խոտացել է այս փոփրիկ թա-  
տերախաղի մէջ. ևս մի գոհար է մէր ՅԵՂԱ-  
ՓՈԽԱԿԱՆ գրականութեան մէջ:

Ոգին, Փարամազի իրեն ոգին է. որ հո-  
յաթեւ սաւառնում է եւ իրաւազուրկների ա-  
զատութեան ճանապարհը մատնանիշում:

Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ





ՏԵՍԱՐԱՆ

Պ Ա Փ Օ

ՊԱՏԿԵՐՆԵՐ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱԽԱՆՏՈՒԹԻՒՆ

Գրուած Երեկոյքների համար

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

(Տեսարանը ներկայացնում է շվեդ կահաւորուած Արժայական Պալատ: Արժան նստած բարձր գահին վրայ՝ ծխում է ներկիլե, որը դրուած է շվեդ, կլոր սեղանի մը վրայ: Երբ վարագոյրը բարձրանում է, Մուրատ (Եպարքոսը), որ կանգնած է Արժայի դիմաց՝ մի փոքր առաջ է անցնում և երկրպագութիւն տալով՝ առում է:)

**ՄՈՒՐԱԾ.** — Իշխողդ Արեւելքի եւ Արեւմուտքի, տէր ծովերու եւ ցամաքներու. ժողովուրդու, զոր Աստուած քեզ հմանաթ է տուած, քո չնորհիւ եւ Աստուծոյ ողորմութեամբ կապրի խաղա՛ղ, գո՛հ եւ երջանի՛կ: Նա իր վայելած բարիքներու վոխարէն՝ քո արեւշատութեան եւ սրբազն կենացդ յարատեւ կաղօթէ:

**ՄԵԼԻՄ-ՃԱՀ.** — Ուրեմն երկիրս գոհ եւ խաղա՛ղ է:

**ՄՈՒՐԱԾ.** — Այո՛, Տէր Արքա՛յ, անդորրութիւնը կատարեալ է:

ՏԵՍԱՐԱՆ Բ.

**ՄԵՆԵԿԱՊԵՏ.** — (Ներս կը մտնէ եւ երկրպագութիւն կը նե) Հովանաւորութեանդ յանձնուած երկիրներու կառավարիչները կը պաղատին Վեհափառութենէդ՝

\*\*\*\*\*

թոյլտուութիւն չնորհելու, որ իրենց հաւատարմութեան հաւաստիքները սփուեն Զերդահոյքի շուրջը:

ՍէլիՄ-ՇԱՀ. — Թող գան. (Սենեկապետը երկրպագելով՝ յետ-յետ կը գնայ ու դուրս կը գայ) : (Մուրատին) Մեծ իշխան, Հրամանազրէ Պետութեանս բոլոր պաշտօնեաներուն՝ անմիջապէս բոլոր հարկերը զրկեն, եւ ո՛չ մէկ յետնեալ տուրք թողուն, ամենը գանձեն: Քանի մը միլիոն ոսկու կարիք ունիմ. պալատներս վերաշինեմ պիտի, կանանցս պիտի զարդարեմ: Խստիւ Հրամաններ տուրք: Թող ամեն խիստ միջոցներ ի գործ դնեն եւ ինձ դրամ հասցնեն:

ՄՈՒՐԱՏ. — Պատրաստ եմ Զերդահոյքին, Տէր Արքայ: Սակայն քանի մը նահանգներու մէջ եղած սաստիկ սովու ու հիւանդութիւնները արգելք կրնան հանդիսանալ:

\*\*\*\*\*

\*\*\*\*\*

ՍէԼԻՄ-ՇԱՀ. — (Բարկացած) Այդ ի՞նչ ընդդիմադարձութիւն: Անձարա՛կ: Թէեւ ամենքն ալ կոտորուին, բնաւ հոգս չեմ ըներ. ինձ դրամ պէտք է: Հրամանազրէ անսասառղները նոյն իսկ մորթազերծ ընեն: Ժողովուրդը միշտ ալ կրնայ սովի ենթակայ ըլլալ. ատիկայ գեռ չի նշանակեր թէ իր հարկը պիտի զլանայ տալ: Դըժոխքն ալ ըլլայ՝ ինձ քանի մը միլիոն ոսկի պիտի հասցնեն: Անձարա՛կ, աքսորի մէջ ոսկորներդ կուտամ վատեցնել:

ՄՈՒՐԱՏ. — (Երկրպագելով) Վեհափառութեանդ կոխած նուիրական հողին՝ երեսս ու աչքս քսեմ. սխալեցայ. անդամ մըն ալ այսպիսի յանցանք չեմ գործեր. կաղաչեմ, բարեհաճիք ներել: Ստրուկու պատրաստ է դեռ աւելին ալ գանձել տալ:

ՏԵՍԱՐԱՆ Գ.

(Սենեկապետը ներս կը մտնի: Վարագոյրը կը բարձրանայ: Երեք Վալիները

\*\*\*\*\*

\*\*\*\*\*

մեկական բառկ ձեռքերնին բունած՝ ներս  
կը մտնեն եւ երկրպագեղով կը հասնին մին-  
չեւ գահի պատուանդանը: Համբոյր փեշե-  
րուն եւ գահի ոտեղուն: Բառկները կը շա-  
րեն: Ծոցերն կը հանեն արկղներ, թան-  
կագին բարեր ու կը զետեղեն ներգիշի սե-  
ղանին վրայ: Նորին երկրպագութիւն եւ  
կը կանգնեն Մուրասի դիմաց):

**ՍէլիՄ-ՇԱՀ.** — Ի՞նչպէս են իմ սիրեց-  
եալ ժողովուրդներու:

**ԵՐԵՔ ՎԱԼԻՒԵՐԸ.** — Գոհ, երջանիկ  
ուրախ:

**ՍէլիՄ-ՇԱՀ.** — Կըսեն. սով, հիւան-  
դութիւն եւ խոռվութիւն կայ. ճի՞շդ է:

**ԵՐԵՔ ՎԱԼԻՒԵՐԸ.** — Սակայն ատոնք  
ժողովուրդի երջանկութեան արգելք չեն:  
Անդորրութիւնը կատարեալ է:

**ՍէլիՄ-ՇԱՀ.** — Գացէք իմ արքայա-  
կան ողջոյններու հաղորդեցէք Հօնաներուս,

\*\*\*\*\*

Եշրաֆներուս, Աղաւաթներուս: Արքայա-  
կան շնորհներու միջու անպակաս կը լլան ա-  
նոնց վրայէն: (Մուրասին) Իմթիազներ  
տուէք Վալիներուս: (Վալիները գլուխ կը  
տան) Գացէք, Տէրը ձեղ հետ:

**ԵՐԵՔ ՎԱԼԻՒԵՐԸ.** — Շա՛տ ապրի մեր  
թագաւորը: (Երեք անգամ կը կրկնեն.  
կը համբուրեն բղանցիք, գահը ու երկր-  
պագեղով՝ յետ-յետ դուրս կը գան):

**ՍէլիՄ-ՇԱՀ.** — Ժողովուրդի լացի ու  
խնդութեան սահմանները եւ ո՛չ մէկ իմաս-  
տուն կը ցած է որոշել: Վա՛յ այն Վեհա-  
պետին եւ պետական մարդուն, որ այդ  
լացին առջեւ կը խղճահարի: Կարգա՛ բը-  
նութեան օրէնքը, մեծ Վէզիրու, կարգա՛.  
Խաղաղ է ծովը, կը ննջեն ալիքները իրար  
գրկած եւ գանձը հոն կը մրափէ. կը մուն-  
չայ ծովը, կուլայ, կոռնայ, գարձեալ գան-  
ձը հոն կը մրափէ: Խաղաղութիւնը ժողո-  
վուրդներու մահն է. լացն է անոր կենսու-

\*\*\*\*\*

\*\*\*\*\*

նակութիւնը։ Թող լայ՝ որքան կամենայ. իսկ այդ լացի մէջէն անգամ, դո՛ւ, մեծ վէզիրս, ինձ համար քանի մը միլիոն ոսկի հանելու ես։ Այս է իմ կամքը։

**ՄՈՒՐԱՏ.** — Պատրաստ է ստրուկս՝ քո Աստուածային կամքը կատարելու։

### ՏԵՍԱՐԱՆ Դ.

**ՍԵՆԵԿԱՊԵՏ.** — (Ներս մտնելով ու երկրպագելով)։ Զեր սրբազն կենաց ազօթողներէն մին՝ իր համբոյրները կը կամենայ սփռել Զեր Արքայական Գահոյից շուրջը։

**ՍԵԼԻՄ-ՇԱՀ.** — Թող գայ։ (Սեռեկապեր կերթայ)։ (Մուրատին) Ժողովուրդը նման է աքաջող ձեան, որքան պարսպնես, ընդհակառակը, աքաջելը կը սաստկացնէ. սահման ու մտրակը միայն կրնան անոր յոռի բնաւորութիւնը մեղմել։ (Ներս կը մտնե Հաֆրզ եթ. գետնատա-

րած կը հասնի գահին. համբոյր գահին, ժղանցքին եւ կասէ)։

**ՀԱՅԲՀ. —** Աստուածարեալ իշխող ծովերու եւ ցամաքներու. մեծդ բազմամիւն հպատակներու, տէր անհուն փառաց. Ալլահը, եւ օրհնեալ ըլլայ անոր անսահման ողորմածութիւնը, իր տրուպ ծառան՝ ստըրուկս զրկեց քեզ մօտ, որ ինձ եւս մասնակից ընես այդ անսպառ չնորհներուն, տալով եկամուտի աղբիւր մը, որ քո անգին արեւշատութեան եւ մարգարէատիպ կենացդ համար՝ միշտ աղօթող լինիմ։

**ՍԵԼԻՄ-ՇԱՀ.** — Ելի՛ր Աստուծոյ մարդը։ (Հաֆրզ կելլէ եւ գլուխ կը տայ։ Մուրատին), Եկամուտի նորազոյն աղբիւր մը գտէք էֆէնուու համար։

**ՄՈՒՐԱՏ.** — Տէր Արքայ. Եւ ո՛չ մէկ Եկամուտի աղբիւր չէ մնացած։ Էլ լեռ եւ դաշտ, ձոր ու ծով, գիւղ ու քաղաք, ապատ ու անապատ՝ ամենը, ամենը չնորհուած են Զեր կենաց աղօթողներուն եւ Զեր փառքի սիւներուն, եւ ո՛չ մէկ անձեռնմուխ աղբիւր



չ մնացած : (Հաֆըզ անհանգստութեան  
և շանսներ կը նե) :

**ՍԵԼԻՄ-ՇԱՀ.** — Վերջապէս իմ հրա-  
մանս է, (Հափըզ ուրախութեան և շանսներ)՝  
թող բոլոր խմասունները, գիտունները,  
վարչագէտները, եկամուտի աղբիւրի գի-  
տակները՝ խորհին, մտմտան, սուրբ և աշ-  
խարհիկ գրքերն ու մատեանները քրքրեն  
եւ նոր եկամուտի՝ նոր աղբիւր գտնեն : Ա-  
սա՛ առաջին քարտուղարիս ֆերմանը գրէ  
եւ մեծ կրօնապետը իր կնիքով նուիրագոր-  
ծէ եւ ինձ մօտ բեր այս էֆ.՝ի հետ միասին :  
**Շուտ:** (Սրանի դուրս կերթան երկրպա-  
գութեամբ) : Սելիմ-Շահ կը վերցնէ ար-  
կրոնիկ ու կոկորդի փետուել : Մեկ մատնիյ  
կը վերցնէ ու հրանուանիով կը սե) . Այո՛,  
ասիկա արքայավայել զարդ մըն է եւ ար-  
ժանի նուէր հարէմիս զարդ Սալթանէ Հա-  
նըմին : Եւ գեռ կը սեն ժողովուրդը սովի-  
ճանկերու մէջ կը տանջուի՛ : Այդ մեծ անա-  
սունին ո՛չ մի բան չի կրնար ազգել : Որքան

կամենաս՝ ծանը հարկերու կապէ, նա կուլայ  
եւ դարձեալ ասանկ զարդեր կունենայ :  
(Զանգ. ներս կը մտնէ սենեկապետը) :  
Վերցո՛ւր ներկիլէն : Ես կանանց պիտի  
իջնեմ : Բոէ՛ ներքնապետին, որ հաղորդէ  
Սալթանէ Հանըմին իմ այցելութիւնը :  
(Սենեկապետը կառնէ ներկիլին ու կեր-  
թայ) : Սելիմ-Շահ կը բանայ արկղները .  
երբեմն ուրախ, երբեմն բարկացած : Մեկը  
կառնէ, միւսը կը դնէ . ագահութեան ար-  
տայայտութիւն կը նե) : Ճամի տուրուր ի-  
քէն՝ Մէտրէսէ հարամ տըր : Գիւղական  
խրճիթը չի կրնար ասանկ հազուագիւտ ի-  
րեր իր մէջ պարունակել : (Կիջնէ գահէն  
արկղիկները ձեռքին . ոտով բակները կը  
շօշափէ : Քանի մը պառյա) : Թող որքան  
կուզէ՝ կաղկանձէ մեծ անասունը, այդ կը ծ-

\*\*\*\*\*

կումին մէջն է իմ հաճոյքը . . . եւ դու՝ Սալ-  
թանը, լուսթող տչերուդ մէջն ես պարփա-  
կել ողջ երջանկութիւնս: Ամբողջ երկիրս  
կը բերեմ երկու այրող տչերուդ ողջակէզ:  
Աչա կուգամ:

Վարագոյք



\*\*\*\*\*

### ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

(Պաֆօի իրակիթը: Երեխաները կի-  
սամերկ. ցուրախց պառկած ևն մեկ հասիրի  
վրայ՝ պատռառն վերմակի տակ: Պաֆօն  
ալ պատռառն հագուստով արեխն և կար-  
կրտնում: Բասօն ցեցոտիների մեջ ճախա-  
րակ և մանում ու երգում):

### ՏԵՍԱՐԱՆ Ա.

#### ԲԱՅՈ.— (Կերգ. k) .—

Մանիք, մանիք իմ ճախարակ,  
Մանիք սիպտակ մանաձներ,  
Մանիք թէլեր հաստ ու բարակ,  
Որ ես հոգամ իմ ցաւեր:

Տիգրանիկս գուլպայ չունի,  
Հանդ է դնում ոտաբաց,  
Գաբրիէլս չուխա չունի,  
Միշտ անում է սուգ ու լաց:

Դեռ հարս էի, որ գործեցի,  
Քանի կապերտ, խալիչա,

\*\*\*\*\*

Այժմ զրկուած ամեն բանից  
Չունիմ անգամ մի քէչա:

Կարմիր օրս երբ սեւացաւ  
Եւ պարտք մնաց թէեւ քիչ,  
Հարկահանի սիրտն էլ սեւցաւ,  
Եկաւ տարաւ ամեն ինչ:  
Տիգօ. — Մարէ՛, սոված եմ. հա՛ց,

Խշուր մը հա՛ց: (Լալիս է: Պայօն գրուխը  
շարժում է ու ա՛խ յաշում: Տիգօն վերմակի  
տակից եղնում է և դեպի մայրը գնում ու  
փարում): Մայրի՛կ, շատ եմ սոված,  
հա՛ց:

ԳԱԲՕ. — (Գլուխը կը բարձրացնէ և  
լաւագին կըսէ). Մայրի՛կ, ես ալ սոված  
եմ. ի՞նձ ալ հաց:

ԲԱՅՕ. — Զալըմի տունը զուլումը  
քանդէ. ես ո՞ւրկէ հաց բերեմ, եավլուներս,  
հաց չը կա՛յ: (Օրօրոցի երեխան կուղայ):  
Քեզ ո՞ւրկէ կաթ տամ. անօթութենէն կաթս

Հորցել է: (Կօրօրէ) Լա՛յ, լա՛յ, լա՛յ...  
քամբախստ բալիս. լա՛յ, լա՛յ... Աստ-  
ուա՛ծ, թախտդ կործանուի. ո՞ւր է քու-  
արդարութիւնը (Երեխան կակծերէ, կօրօ-  
րէ): Լա՛յ, լա՛յ, լա՛յ... Բա՛ս, էսքան էլ  
նեղութիւն կըլլա՛յ, որ մեղի տուին: Քուրդ  
հէրամին մալերս տարաւ, վաշխառուն կա-  
լիս հողն էլ աւլեց: Միւլթէզիմը դար-  
տունս էյսան ըրաւ: (Կուրծիլ փետում է)  
Չուլո՛ւմ, զուլո՛ւմ... թախտդ վերան-  
դառնայ, Զալլո՛ւմ...:

ՏԻԳՕ. — Մայրի՛կ, հա՛ց: (Գնում է  
հօր, մօր մօտ ու կաշիի կաորմերը վերցը-  
նում՝ ծամում ագահների պիս):

ԳԱԲՕ. — (Տեսնելով որ եղբայրը մի  
բան կուտի՝ անկողնի միջից կեղկ և լալա-  
գին: (ի՞նձ ալ տուր, ի՞նձ ալ, փորս կը  
ցաւայ):

ԲԱՅՕ. — Չուլո՛ւմ, զուլո՛ւմ... ա՛յ  
եավլուներս...:

ԴՈՒԻՆԻԿ.— (Անկողնից կելի, մազերը  
գզգած՝ դեպի մայրը) ի՞նձ ալ, մայրի՛կ,  
ի՞նձ ալ: (Կերթայ դեպի եղբայրները. կա-  
շիներեն մեկ կտոր կը ծամէ) Ասիկա հաց  
չէ՛, (լալով) կաշի՛ է: (Պատօն գլուխը ծե-  
ծում է և գլուխը ծնկներին անշարժ հե-  
կեկում է):

ԲԱՍՈ.— Զուլո՛ւմ.... զուլո՛ւմ....  
Թախտդ կողծանուի (Ծծերն է փետում և  
անշարժ դեպի երկինք նայում):

### Պատկեր

ՈԳԻ.— (Լոյսի շողի մեջ ճերմակ պա-  
րանաւորուած, մեկ դռնից կը մտնէ և  
հանդարս, ճեռնամերկ՝ կասկ). Կրեցէ՛ք  
վիշտը, ըմպեցէ՛ք դառնութեան բաժակը:  
Ա՛յդ է թոյլերի բաժինը: (Միւս դունկն  
դուրս է գնում):

ԵՐԵԽԱՅՔ.— Հա՛ց, հա՛ց, քաղցէն կը  
մարինք:

ԴՈՒԻՆԻԿ.— Զեմ կրնար կաշին ուտել:  
(Լալիս է: Աերս է մտնում Այլորը):

ԲԱՍՈ.— Պաքօ, տար այդ աքլորը  
ծախէ, մի կտոր հաց բեր երեխաներիս:  
Եավրուներս սովէն մեռան:

ՊԱՔՕ.— (Վեր է կենում՝ տրեխը մի  
կողմ նետեղով. երեխայց կը յարձակին տը-  
րեխի վրայ): Գիշեր՝ ցերեկ շան պէս չար-  
չարուէ եւ այս է քո հալլը: Թո՛ւ քու նա-  
մուսին: (Երեխաները կրծում ու ծամում  
են կաշու կտորները: Պատօն գլուխը կը  
շարժէ: Բասօն լալով երեխան է օրօրում)  
Թո՛ւ յու նամուսին (Զեռիք զարնում է  
ճակտին եւ գլուխը կուտ ֆարում է):

ԲԱՍՈ.— Վերա՛ն դառնաս, թախտ, որ  
զուլումը վրադ նստած՝ սուգն ու շիւանը  
կը ցնկնէ:

ՈԳԻՆ.— (Նոյն ճեւով կուգայ): Խը-  
մի՛ր դառնութեան բաժակը: Դուն պիտի  
մեռնիս, որ դուն ապրիս. այս է բնութեան  
անշէջ օրէնքը:

### Վարագոյր

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

(Շուկայ. առուծախա: Արհեստաւորմերը կարում են. ծախողները գովում են իրենց ապրանքները. մեկը կառնե, միւսը կուտայ. անցուդարձ են անում):

ՏԵՍԱԲԱՆ Ա.

ՊԱՔՕ.— (Բեմից դուրս): Ա.ՔԼՌ' ը, աքլոՌ' ը առնող. լոՌ' ւ աքլոՌ', գիրոՌ' ւ կ աքլոՌ': (Մտնում է բեմը) Ա.ՔԼՌ' ը առնող, լոՌ' ւ աքլոՌ', էժաՌ'ն աքլոՌ', խառուտիՌ' կ աքլոՌ':

ԱՇՔԱԾ.— (Պաֆօն մտած դունից կը մտնէ): Ա.ՔԼՌ' ը, աքլոՌ' ը, աքլոՌ' ը ծախոՌ': (Պաֆօն կը տայ սրան: Աշրաֆը կառնե և կը զննէ): Ի՞նչ տամ: Էնքան էլ աղէկ չէ: ԴէՌ', ըսէ, քանիՌ' փարայ տամ:

ՊԱՔՕ.— ԱղաՌ', շատ լաւն է, ի՞նչ կը տառ, տուր:

\*\*\*\*\*

ԱՇՔԱԾ.— 60 փարայ կուտամ: ԱՌ' (Կը հանէ գրպանեն ժամալը և կը տայ դըրամը):

ՊԱՔՕ.— ՈՌ' է, աղա, չեմ տար, էժան կուզես: Անօթի զաւակներուս հացի համար է:

ԱՇՔԱԾ.— Որ ատանկ է, աՌ' 70 փարայ: ԴէՌ', աՌ' :

ՊԱՔՕ.— Զեմ, աղա, չեմ կընար, շատ էժան կուզես: (Կուզէ երթալ) Ա.ՔԼՌ' ը, էժաՌ'ն աքլոՌ':

ԱՇՔԱԾ.— ԱՌ' յ տղաՌ', աքլոՌ' ծախող (Պաֆօն կը դառնայ): ԵՌ' կ, ԵՌ' կ. աՌ' : ԱՌ' երկու զուբուշ: Թէեւ չարժէ. բայց խեղճ ես, աՌ': (Աշրաֆը առնում է աֆլորը և գրնում: Պաֆօն մի ժանի անգամ համրում է դրամը և երբ կամենում է գնալ՝ գալիս է չափը):

\*\*\*\*\*

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՀԱՅՔ. — (Խրոխան) Տուր 20 փարտ:

ՊԱՔՈ. — Ո՞վ ես զու եւ ի՞նչ քսան  
փարտ: Քեզ ի՞նչ պարտք ունիմ:

ՀԱՅՔ. — Ե՞ս այն եմ, որ իրա-  
ւունք ունի ամեն հաւ ծախողէ քսան փարտց  
տուրք առնել: ՏԵ՛ս, ահա Փարմանս (Յոյց  
և տալիս ուկեզօծ ֆարմանը): Տուր քսան  
փարտն:

ՊԱՔՈ. — Թագաւորի Փէրմանը իմ ա-  
չերուս վրայ. իմ գլխուս վրայ: Ա՛ռ:  
(Տալիս և խան փարայ: Հաֆլզ առնում և  
եւ յաղում և բեմի խորի: Պայօն ձեռք  
ծնկան և զարնում եւ գլուխը շարժելով գր-  
նում և դեպի կողի դուռը): Քսան փարտ,  
անօթիներուս արեան դինը. քսան փարտ:

\*\*\*\*\*

ՏԵՍԱՐԱՆ Գ.

*ԱՐԴ* ՄՆԿՕ. — Ծօ՛ ի՞նչ կը մտածես. ի՞ն-  
չո՞ւ ախրեր ես:

ՊԱՔՈ. — Ի՞նչպէս չը մտածեմ. հաւ  
ծախուլուս համար՝ թագաւորի հրամանով  
քսան փարտ խարճ տոին:

*ԱՐԴ* ՄՆԿՕ. — Սիրող ամուր պահէ, աշ-  
խարհս ասանկ եկած է, ասանկ ալ կերթայ,  
Պաքօ:

ՀԱՅՔ. — (Յանկարծակի վրայ գա-  
րով) Տուր քսան փարայ. անունդ Պաքօ է.  
ահա Փէրմանս: (Յոյց կուտայ): Տուր քը-  
սան փարտն:

ՊԱՔՈ Թագաւորի հրամանը աչքիս,  
գլխուս վրայ: Կուտամ, աղա: (Տալիս և 20  
փարա) Բայց երեխաներուս հացը կը կը-  
րես: Ես կնոջս ի՞նչ պատասխան տամ:

ՀԱՅՔ. — Կնոջմէդ չա՞տ կը վախնաս:  
(Խորամանկօրեն):

\*\*\*\*\*

**ՊԱՔՈ.** — Տունս անիկա կը պահէ.  
Ի՞նչպէս չը վախնամ:

**ՀԱՅՔԼԶ.** — Տուր քսան փարա. ահա  
ֆէրմանս: Կնոջմէն վախեցողէն ալ քսան  
փարա խարճ ունիմ: Տուր, տուր: (Հա-  
մարեայ խում և բան փարա. Պահօն յա-  
րացած՝ մեկ ձեռքը ծոծրակին, նայում և  
ձեռքի դրամին):

**ՄՆԿՈ.** — Ծօ՛ խենթուկ, քեզ ո՞վ ը-  
ստ, ըսես կնոջմէս կը վախնամ: Դէ՛ կե՛ր.  
Խենթապուշ (Ձեռքով զարնում և յուշ-  
լահին, որը ընկնում է):

**ՀԱՅՔԼԶ.** — Տուր քսան փարա: Տուր,  
ահա ֆէրմանս. գլուխդ քեալ է. տուր 20  
փարան (Կառնէ գետնեն բան փարան):

**ՊԱՔՈ.** — (Գետին կը զարնէ մնացած  
բան փարան և խենթի պէս այս ու այն  
կողմը կը նկնի): Զուլո՛ւմ... Զուլո՛ւմ...  
Զուլո՛ւմ....:

**ՏԵՍԱՐԱՆ Դ.**

**ՈԳԻՆ.** — (Նոյն ձեւով) Եւ Զուլումը  
պալատներու մէջ եւ գահի բարձունքին  
կը կըզած՝ կը ցնկնէ շիւանն ու վիշտը:

Եւ վշտի կաղ կարաւանը մահուան  
թոյնը բեռնաւորած՝ կը բաղխէ խրճիթնե-  
րու դռները եւ իր օթեւանը հոն կընէ:


Եւ մահուան թոյնը կը լափէ խրճիթին  
եւ այդ մահուան մէջն է միայն երկիրը  
անդորր:

Անդորրութիւնը կատարեալ է:  
Բոլոր նիւթական ու կենսական բովանդա-  
կութիւնը: Զուլո՛ւմ, վի՛շտ, մա՛չ....


Էսայիշ պէր ժեմալ տըր:


Իյմէ՛ գառնութեան մըուրը, նիրհա՛ծ,  
մըափա՛ծ ժողովուրդ, խմէ՛. դուն պիտի  
մեռնիս, որ դուն ապրիս:

Վարագոյր



Վերջ





18865

204.

ՓԱՐԱՄԱԶԻ ԳՈՐԾԵՐԸ

---

1. — ՃՈՒՂՈՒՊՐԻՍՆԵՐ

2. — ՊԱՔԾ

ՄԱՄՏՈՅ ՏԱԿ ԵՆ

---

3. — ՔԱՄԻԻՆ ԲԵՐԱԾԸ ՔԱՄԻՆ ԿԸ ՏԱՆԻ

4. — ՃԱՌԸ



2013

